

ԿԱՐԱՊԵՏ ԵԳԻՒԿՈՊՈՍ ԴՐԻՄԵՑԻ

**ՄՐԲՈՑ ՀՈՒՓՍԻՄՑԱՆՑ
ԵՎ
ԳԱՅԻԱՆՑԱՆՑ ԿՈՒՑՍԵՐԻ
ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ*)**



Կարապետ Եղիսկոպոս Դրիմեցի

1. ՆԱԽԱԲԱՆ

Ծրիստոսի Ս. Ավետարանի քառողության և քրիստոնեական հավատքի տարածման գործում նահատակ մարտիրոսների և հայ եկեղեցու սրբերի շարքում առանձնահատուկ պատվավոր տեղ են գրավում Հռիփսիմյան և Գայիանյան կույսերը, որոնք իրենց կյանքի գնով փարատելով ռդիւապաշտ մոլորովթեանց խաւարը» - Հայաստան աշխարհից՝ պատճառ եղան քրիստոնեությունը Հայաստանում պետության կողմից պաշտոնական կրոն ճանաշվելուն ավելի վաղ, քան աշխարհի որևէ այլ երկրում։ Հռիփսիմյան և Գայիանյան կույսերի նահատակությունը ցնցեց հայ ժողովրդի

*) Կազմված է ըստ Հայօմավուրբի, Ադաթանգեղոսի, Առաքել Վարդապետ Դավիթեցու և Արել Արքեպիսկոպոս Միթթարյանի

հեթանոսական հավատքի հիմքերը։ Հայագործ լսելով Քրիստոսի հավատով զորացած կույսերի քարոզությունը և տեսնելով հանում քրիստոնեական հավատի մահ ընդունելու նրանց անվեհերությունն ու պատրաստակամությունը, խորապես համոզվեց նոր կրոնի ճշմարտության մեջ ու իր ձեռքով հեթանոսական բագինները քանդելով հալածեց քրմերին։

Հռոմեաց մինչև Վաղարշապատի հնձանները ձգվող երկար ու զրկանքներով լի ճանապարհը Հռիփսիմյան ու Գայիանյան կույսերի համար դարձավ մշտաշող փառքի և անմահության փառապստիկի ճանապարհ։ ՇՄերժելով ունայն կյանքը, փափագող անթառամ պատկին, նիմիրած իրենց անձը սիրույն Քրիստոսի, նրանք դարձան երկնակոր զինվորներ»։ (Կոմիտաս Կաթողիկոս, շարական և Անձինք նույիրեալք)։

2. ՀՈՌՄԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱԼՈՇԱՆՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Հոռմ: Համաշխարհային քաղաք: Բաղմաթիլ ազգեր աշխարհի զանազան երկրներից եկել ու բնակություն են հաստատել այս մեծ, ճոխ ու զեխ քաղաքում, իրենց հետ բերելով նաև սեփական երկրներում պաշտոնապես ճանաչված կրոնները: Հոռմ են բերվել հեթանոսական քաղմաթիլ աստվածների արձաններ Հունատանից, Եգիպտոսից, Փյունիկիայից և այլ երկրներից և հոյակալ տաճարներում պաշտամունքի առարկա դարձվել:

Հոռմի հրեական ժողովարաններում էլ ընդունված էր հոգվայի պաշտամունքը:

Սակայն Հոռմի քաղաքացիները հեթանոսական աստվածների պաշտամունքի մեջ այլևս հոգեկան քավականություն չեին գտնում, մանավանդ այն բանից հետո, երբ Հոռմի կեսարներն իրենք իրենց աստվածացներում տաճարներում պաշտամունքի առարկա դարձրին իրենց կիսանդրիները:

Հոռմը հղիացած պատերազմական հաղթանակներով ու ալարառություններով, դարձել էր գոռող ու ամբարտավան, միաժամանակ վերածվելով մեղկ, շվայտ, ցոփ ու անառակ կյանքի ախտավոր բույնի: Բարոյական ոչ մի արժանիք հարգի չէր Հոռմի պաճառներ, զվարճաներ ու բիրտ հասարակության ապականված մթնոլորտում:

Եվ զարմանալի չէ, որ քրիստոնեական առաքինությունն ու բարոյական ուսմունքը արհամարհված ու հայածված լինելին բարքերի լիակատար անկման այնպիսի մի անառակ վայրում, ինչպիսին հանդիսանում էր Հոռմը:

Քրիստոնեությունը ատված էր ոչ միայն հոռմայեցիների, այլ և հրեաների կողմից, որոնք քիչ շանքեր չէին թափում հոռմայեցիներին համոզելու գրիստոնեական կրոնի վնասակար լինելու մեջ, ամեն տեսակ արտառոց ու շարամիտ հերյուրանքներ հնարելով քրիստոնեական ուսմունքի մասին:

Հոռմի կայսրները, ներոնից սկսած, կատաղի վայրագությամբ ու շտեսնված խօստարտությամբ հալածել սկսեցին քրիստոնեական անխնա ոչնչացնելով, կոտորելով խարույկների վրա այրելով, խաշելափայտերի վրա բարձրացնելով ու կրկեսներում գագաններին կեր դարձնելով նրանց: Հավատացյալները Քրիստոսին պաշտում էին ծածուկ. համայնական աղոթքի համար նրանք հավաքվում էին իրենց իրար թե հերանուսները դեռ պաշտամունքի առարկա հաճախ ապահովությամբ. համար նրանք Հոռ-

մից դուրս գտնվող կատակոմբներում էին հավաքվում և զամբարների լուսի տակ աղոթում ու հաղորդվում: Քրիստոնյաների թշնամիներն այս մասին զանազան առասպեկտներ էին հորինում ու ամենուր պատմում:

Հալածանքների այս դաժան օրերին թե՝ առաքյալները և թե՝ բահանաները իրենց բարողներով ու խրատներով քրիստոնյաների մեջ պահպանում էին արիության ոգին. քրիստոնեության անհողողությամբ հավատքով զորացած հավատացյալները, հանում Քրիստոսի, անտրատունջ կերպով կրում էին բոլոր տանջանքները. թե՝ բանտերում, թե՝ խաչելափայտերի վրա գամվելիս և թե՝ կրկեսներում գաղանների կողմից հողոտվելու պահերին Քրիստոսի անունը բարձր էր հնչում նրանց շրթերին ու մահվան վերջին բոպեներին խորը հավատի լուսը շողոս էր նըրանց զեմքերին: Քրիստոնյաները իրենց հավատի մեջ անդրդվելի մնալով, հանգիստ ու անխոռվ սրտով ընդունում էին մահը, արժանանալով Քրիստոսի անվան մարտիրուների կողման:

Խորն էին քրիստոնեական հավատի արժամատները և նրա հանդեպ անզոր հալածանքներն ու դաֆնությունները. և որքան սաստկանում էր հալածանքը, այնքան ավելի ածում ու բազմապատկվում էր Քրիստոսի ուսմունքին հետևողների բանակը. Հոռմում նորանոր քրիստոնեական համայնքներ էին առաջանում և քրիստոնեությունը հետզհետե ազգաբնակչության ցածր խավերից տարածվերով հաղթականորեն մուտք էր գործում բարձր պահպանական դասի ապարանքները:

Հեթանոսական կրոնը Հոռմում ապրում էր ծանր երկունքի օրեր, խարիսվել էր նրա հիմքը ու վրա հասել անխոռսափելի մայրամուտը. հեթանոսական աստվածները կորցրել էին իրենց գրավչությունը և դադարել պաշտամունքի առարկա լինելուց. նրանք իրենց գոյությունը պահպանում էին միայն վերից եկող հրամանների ու բիրտ ուժի հովանավորության շնորհիվ: թե՝ կայսերական ապարանքներում ու ազնվականների դղյակներում և թե՝ քաղաքացիների տներում ու հողագործների խրճիթներում հեթանոսական աստվածների արձանները դրված էին միայն ի ցուց մարդկան, որ իր թե հերանուսները դեռ պաշտամունքի առարկա ունեն:

Յ. ՀՈՒՓՍԻՄՑԱՆ ՆՎ ԳԱՅԻԱՆՑԱՆ ԿՈՒՑՍԵՐԸ ՀԵՌԱՆՈՒՄ ԵՆ ՀՈՌՄԻՏ՝ ՈՒՂԵՎՈՐՎԵԼՈՒ
ԳԵՂԻ ԱՐԵՎԵԼՔ

Մի խումբ կույսեր, Գայիանե կույսի մայ-
րապետովթյամբ, Հոռմ քաղաքում գալոտնի քրիստոնեական պաշտամունք էին կատա-
րում Դիոկղետիանոս կայսեր օրով^{*)}: Կույ-
սերի մեջ իր շերմեռանդովթյամբ և նվիրվա-
ծովթյամբ աշքի էր ընկնում Կլավդիոսի և
Պատրոնիկեի կայսերական ցեղից գեղեցկու-
հի Հոփիսիմեն: Նա իր վզին միշտ կրում էր
երուաղեմից յուր տատիկի բերած խաչ՝
Քրիստոսի խաչի մասունքներով: Այս մա-
սունքներով խաչը Պատրոնիկեն ընդունել էր
Հակոբոս Տյառնեղորից և իրք նվիրական
ավանդ պահպառ էր նրանց ընտանիքում:

Դիոկղետիանոս կայսրը, որ անառակ ու
ցոփ կյանք էր վարում, կամեցավ կին առ-
նել Հոռմի լայնածավալ կայսրովթյան մեջ
դունվող կանանցից ամենապեղեցիկին:

Նրան պատմեցին Հոփիսիմեի գեղեցկու-
թյան մասին: Կայսրը ցանկացավ անձամբ
տեսնել նրա գեղեցկովթյունը: Սակայն
Գայիանե մայրապետը գալիք փորձանքնե-
րից խուս տալու համար, խորհուրդ անելով
Հոփիսիմեի, մյուս կույսերի ու քահանանե-
րի հետ, որոշեց խմբով փախչել Հոռմից: 70
Հոգով նավ նստելով նրանք Հոռմից ճանա-
պարհվեցին գեղի երուաղեմ: Հոռպակ
(Հայքա) հասնելուց հետո նավից իջան և
ոտով գնացին մինչև երուաղեմ, ուր
մեկ ամիս մնացին Գեթսեմանի պարտեզում:
Այսեղ Հոփիսիմեն, Ս. Աստվածածնա գե-
րեզմանի առաջ ծնկաշոր աղոթելով, ուստ
արեց իրեն նվիրել Աստվածամորը և երդվեց
մինչև իր կյանքի վերջը կուս մնալ:

Կույսերի ու քահանաների խումբը երուա-
ղեմից գնաց Ուռհա (Եղեսիա), որտեղ եր-
կրպագություն արեցին Քրիստոսի Ս. Դաս-
տառակին: Մեծ էր խումբը և աշքի էր ընկ-
նում ամեն տեղ, այդ պատճառով էլ նրանք
որոշեցին բաժանվել միմյանցից: ումանք մը-
նացին Ուռհայում կամ ցրվեցին զանազան
կողմեր, իսկ մնացածները դարձյալ Գայիա-
նեի առաջնորդովթյամբ շարունակեցին ի-
րենց ճանապարհը: Վերջիններիցս անբաժան
մնացին քահանաները՝ թվով երեք հոգի:

^{*)} Հոռմի կայսր 284—305 թվականներին, ազ-
տագրված ստրկի օրդի: Քաղաքացիական կոկների
ժամանակ դարձավ կայսր Բանակը և պատերազմա-
սեր Կայսրովթյան ամբողջ շրջանն անցկացրեց պա-
տերազմելով: Աքրիկայում և Գալիկայում: Մեռավ
313 թվականին:

Հոփիսիմյան և Գայիանյան կույսերը ու-
ղարվիցին կեսարիա ու այնտեղից էլ անցան
Եկեղեց և ապա Դարանալյաց գավառը.
այստեղ Մանե կույսը անջատվելով նրանցից
մնաց լեռներում ճգնելու համար, իսկ Նու-
նե կույսն էլ առաքելովթյամբ մեկնեց Վրաս-
տան, քրիստոնեական ուսմունքն այնտեղ
քարոզելու համար:

Մանացած կույսերի խումբն Դարանալյաց
գավառից հչավ Բզնումյաց երկիրը: Այս-
տեղ նույնպես բաժանում տեղի ունեցավ:
կույսերից ոմանք մնացին Խլաթում, իսկ ո-
մանք էլ անցնելով Աղձնյաց աշխարհը, բնա-
կովթյուն հաստատեցին Խողձ ու Թուլս գյու-
ղերում՝ քրիստոնեական ուսմունքը քարոզե-
լու մտադրովթյամբ:

Բզնումյաց երկրից մնացած կույսերը և
քահանաները անցան Սոկաց աշխարհը, ուր
հիմնեցին Ս. Խաչ վանքը: Քահանաներից
մեկին թողնելով նորահիմն վանքում, մյուս-
ները շարունակեցին իրենց ճանապարհը:
մինչև հասան Հոգոց վանքը, որտեղ պահ-
վում էր Ս. Աստվածածնու պատկերը՝ փայտի
վրա և կարպած: Խմբի անդամներից մյուս եր-
կու քահանաներն էլ մնացին այստեղ, Հոգոց
վանքում բնակովթյուն հաստատելու համար:

Ուռհայոց մինչև Հոգոց վանքը կույսերի
խումբը ոչ մի տեղ քրիստոնեական համայն-
քի Հանողիկեց: Համատարած հեթանոսական
կրոնն էր թագավորում:

Հոգոց վանքից կույսերը իրենց ճանա-
պարհը շարունակելով հասան Վարագա-
լեռները, ուր բարական ժամանակ նրանք
մնացին՝ ճգնելով ու ապրելով ամայովթյուն
մեջ: Վարագա լեռներում, մի խաչքարի տակ
կույսերն ամփոփեցին Հոփիսիմեի վզի խաչը:
Քրիստոսի խաչի մասունքներով: Հետագա-
յում այս վայրում էլ հիմնվեցին Ս. Խաչ
եկեղեցին և Վարագա նշանավոր վանքը:

Վարագա լեռներում կույսերի խումբը հե-
թանոս հայերի կողմից հալածանքի ենթարկ-
վեց և ստիպված եղավ հեռանալ գեղի Ա-
րարատյան աշխարհը: Այստեղ, բնակովթյուն
հաստատելով Վաղարշապատի հնձաներում,
նրանք մշտական պահքով ու աղոթքով անց
էին կացնում իրենց սրբակյաց կյանքը: ապ-
րուածի միջոցներ հայթայթելու համար էլ
ուղունքներ էին շինում ու վաճառում տեղա-
ցիներին:

4. ՀԻՒԹՈՒՄՅԱՆ ԵՎ ԳԱՅԻԱՆՅԱՆ ԿՈՒՅԵՐԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դիոկղետիանոս կայսրը զերեցիլ Հոփիսիմեին գտնելու համար նամակներ է ուղարկում ամենուրեք:

Հայոց Տրդատ թագավորը ևս ստանում է Դիոկղետիանոս կայսեր նամակը, կայսրը նամակում նկարագրելով Հռոմից փախած կրկնակությունը, խորհուրդ էր տալիս Տրդատին փնտրել ու գտնել կույսին:

— Եթե կհավանես, վերցրու քեզ կին, ապա թե ոչ, ուղարկիր նրան ինձ՝ Հռոմ:

Հոփիսիմեին որոնելու և գտնելու համար Տրդատը ինդրակներ է ուղարկում իր երկրի բոլոր կողմերը, որոնք շատ շուտով Վաղարշապատի հնձաններում հայտնաբերում են քրիստոնյաց կույսերի խումբը և նրանց մեջ Հոփիսիմեին:

Պալատականները վերադառնալով թագավորին հիացմունքով պատմում են Հոփիսիմեի գեղեցկության մասին: Տրդատն անմիշապես մարդիկ է ուղարկում, որպես Հոփիսիմեին պալատ բերեն:

Հոփիսիմեին բոնությամբ պալատ են բերում: Տրդատ թագավորը հիացած Հոփիսիմեի գեղեցկությամբ, որոշում է նրան իր կինը դարձնել, սակայն Հոփիսիմեին վճռական հաստատակամությամբ մերժում է թագավորի առաջարկը: Տարբանքով լցված, Տրդատը ուզում է բոնությամբ տիրանալ Հոփիսիմեին, բայց սուրբ կույսն այնպիսի արիություն է ցուցաբերում, որ

Թուղացան կորովիք հաստածիդ աղեղանց, նվազար կանայքն վառեցան զինու, թագաւորն պերճացեալ զօրութեամբ փա-

ո ք

ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաշէրաւ: Եվ ասէգն Տրդատ պարտված նահանջեց:

5. ԿՈՒՅԵՐԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏՈ

Անմեղ կույսերի նահատակությունից հետո Տրդատ թագավորը հիվանդանում է և խելագարի պես թափառել սկսում սար ու ձորերում, ոչ մի տեղ հանգիստ ու դադար չգտնելով: Նույն վիճակին են արժանանում նաև շատ պալատականներ:

Թագավորի քույր Խոսրովիդովստը երազ է տեսնում. երազում նրան հայտնում են, որ թագավորի հիվանդությունը բռութել կարող է միմիայն Ս. Գրիգորը, որը գտնվում է մահապարտների Խոր-Վիրապում: Խոսրովիդովստը իր տեսած երազը պատմում է նախարարներին ու իշխաններին, որոնք զարմացած բացականում են.

Այն ժամանակ պալատ են Հրավիրառ Դայիանեին, որպեսզի վերշինս համոզե Հոփիսիմեին՝ Տրդատի առաջարկին ընդունելու: Սակայն, Գայիանեն հիշեցնելով Հոփիսիմեին նրա երգումը Ս. Աստվածածնաւ գերեզմանի առաջ, խրատում է, որպեսզի նա անտես առնելով երկրացին ունայն կյանքի փառքը, համբերությամբ տանի իր խաչը և երկնային անթառամ պսակին արժանանա: Հարմար միջոց գտնելով Հոփիսիմեին թողնում է պալատուն ու փախչում իր հնձանը: Զայրացած թագավորը հրամացում է կոտորել հնձաններում պատսպարված կույսերին:

Թագավորի զայրէնները հնձանները գալով բռնում են Հոփիսիմեին ու թևերը հետև կտրում լնջուն, ապա փորելով հանում աշքերը, որից հետո մարմինը ցցի վրա հանում: Չբավականանալով դրանով զահիճնները նրա աղիքները դուրս են թափում և մարմինն էլ հոշոտելով կտորերը ցրիվ տալիս ամբողջ դաշտով մեկի: Հոփիսիմեի հետ միասին նահատակվում են նաև հնձանում գտնվող նրա 32 ընկերուհիները:

Գայիանեն այդ ժամանակ բանտարկված էր պալատում, գահիճնները նրան էլ դուրս տանելով հարավային քաղաքաղնից, խոշտանգելով նահատակվում են: Գայիանեի հետ նահատակվում են ևս երկու կույս: Հնձաններից մեկում մնացել էր մի հիվանդ կույս. որան ևս զահիճնները չեն խնայում ու խոշտանգելով նահատակվում են:

Այսպիսով սփրոյն Քրիստոսի 37 կույսեր նահատակվում են Վաղարշապատի հնձանների մոտ գտնվող դաշտում:

Այս դեպքը տեղի ունեցավ 301 թվականին:

— Մի՛թե 14 տարի մի մարդ կարող էր կենդանի ու զերծ մնալ Խոր-Վիրապի թունավոր օձերի ու կարիճների միջավայրում:

Երազը կրկնվում է:

Այս անգամ Խոսրովիդովստի պահանջով գնում են Արտաշատի Խոր-Վիրապը և ձեռլով նրա մեջ մի երկար պարան, վերևից կանչում են.

— Գրիգոր, եթե կհնդանի ես, շարժիք պարանը:

Պարանը շարժվում է: Խորից են ձայն տալիս:

— Կապի՛ր մեջքիդ պարանը, որ քեզ լույս

աշխարհ հանենք: Եվ դուքս են հանում Գրիգորին Խոր-Վիլապից ողջ ու առողջ:

Երբ Գրիգորին Խոր-Վիլապից հանելոց հետո պատմում են Վաղարշապատի հնձաններում կատարված եղենի մասին, նաև իսկովն շտապում է կուտերի նահատակության վայրը և հավաքելով սուրբ նահատակների մարմինները, թաղում է նահատակման իսկ տեղերում: Ս. Հոփիսիմեի մարմինը ամփոփում է քարե արկղի մեջ, ծածկում

տապանաքարով, կնքում իր մատանիոյ ու ապա թաղում:

Գայիխանեի նահատակման վայրում էլ հովին է հանձնում նրա աշխատանք, իսկ հիմանդ կույսի նահատակման տեղում ամփոփում է անհայտ կույսի մարմինը:

Ս. Հոփիսիմեի գերեզմանի վրա կառուցվում է Ս. Հոփիսիմեի անվան վկայարանը, Ս. Գայիխանեի գերեզմանի վրա՝ նրա անվան վկայարանը, իսկ անհայտ կույսի գերեզմանի վրա էլ՝ Շողակաթի անվան վկայարանը:

6. Ս. ՀՈՒՖՍԻՄԵԻ ՎԱԱՅՐԱՆ

Ս. Գրիգորի և Տրդատ թագավորի շինած վկայարաններն ավելի նման էին մատուռների և ոչ այն հոյակապ եկեղեցիներին, որ հետագայում կառուցվեցին:

Պարսից Շատուհ: Երկարակյաց արքան Մեհրուժան Արծրունու հետ միասին 380 թվականին արշավեցին Հայաստանի վրա և համատարած մահ ու ավել սփռելով Արարատյան նահանգում, շատ դյուղեր ու քաղաքներ հրո ճարակ դարձրին: Արբոց Հոփիսիմյանց և Գայիխանյանց վկայարանները, որոնք հայ ժողովրդի համար նվիրական ովատատեղիների էին վերածվել, նույնպես կործանվեցին:

15 տարի անց, 395 թվականին Ս. Սահակ Պարթև հայրապետը նոր վկայարաններ շինեց կործանվածների տեղում: Բաց անելով Ս. Հոփիսիմեի տապանը՝ Ս. Սահակը տեսավ քարե արկղը ու Ս. Գրիգոր Լուսավորչի կնիքը: Առանց բացելու քարե արկղը նաև կործանվելու մասին համար մատուռները:

Ս. Սահակ Պարթևի կանգնեցրած վկայարանները, պատմիների ասելով, փոքր, ցածր ու մուժ մատուռներ էին: Հայ ժողովով զերմեռանդությամբ լցված ովստի էր գալիս այդ սրբազն վայրերը՝ աղոթելու և սրոց տապանաքարերը համբուրելու համար:

223 տարի անց, 618 թվականին, Կոմիտաս կաթողիկոսը (617-624) ձեռնարկեց ու ավարտեց Ս. Հոփիսիմեի անվան վանքի ներկային շենքի կառուցումը: Շենքը կառուցված է կոփածող քարից, լայնանիստ կաթողիկեով, կիսարողուրակ կամարներով և հանդիսանում է 7-րդ դարի հայ ճարտարապետական արվեստի սքանչելի ու աննման մի կոթող: Շենքը կառուցելուց առաջ Կոմիտաս կաթողիկոսը հին մատուռը քանդելով դուրս հանեց տապանից Ս. Հոփիսիմեի քարե արկղը և տեսնելով Ս. Գրիգոր Լուսավորչի ու Ս. Սահակ Պարթևի մատանիների կը-նիքները, ինքն էլ իր հերթին կույսի վայրին իր մատանիով ու դնելով այժմյան

դամբարանում, նրա վրա կառուցց վանքը: «Յամի իր թագաւորութեան Ապրումնեղ Խոսրովու քակեաց կաթուղիկոսն Կոմիտաս զմատու սրբոյն Հոփիսիմեայ ի վաղառշապատ քաղաքի, ով կարի ցած և մթին լր շինուածն, զոր շինեալ էր սրբոյն Սահակայ Հայրապետի Հայոց կաթուղիկոսի որդուն սրբոյն ներսիսի» (Մերէու եպիսկոպոս):

Շենքի կառուցումն ավարտելուց հետո նրա արևմտյան դռան ճակատին Կոմիտաս կաթողիկոսը արձանագրել տվեց :

«Ես Կոմիտաս եկեղեցապահ սրբոյ Հոփիսիմէի, կարգեցայ յԱթոռ սրբոյն Գրիգորի, և շինեցի գտաճար սրբոցն վկայիցն Քրիստու:

Տամ դար անցնելուց հետո Հոփիսիմեի շեն ու պայծառ վանքը պարսից, արարաց, թաթարաց ու օսմանցց արշավանքների և ավերումների հետևանքով բոլորովին ամայցավ ու զրկեց միաբանությունից:

1653 թվականին Փիլիպոս կաթողիկոսը ուրոշեց վերստին շենացնել Ս. Հոփիսիմեի վանքը և նրան վայելու տեսք տալի Վանքի տանիքը, քայլայված որմերը նորոգել տվեց սրբատաշ քարեր գործածելույ և նոր միաբանություն կարգեց՝ շենքերն ու տնտեսությունը բարեկարգ վիճակում պահելու համար:

«Ե Թուին ՌՃՌ (1653 թ.) Քրիստոսի ծառայ Փիլիպոս Կաթողիկոս Ամենայն Հայոց վերստին նորոգեցի զեկեղեցին սրբոց կուսանացն Հոփիսիմեայ և Գայիխանեալ:

Ինչպիսի վկայում է Սիմեոն կաթողիկոսն իր «Ձամբաւում», Եղիազար կաթողիկոսը և իր երախայրիքն է թողել, Ս. Հոփիսիմեի վանքում բավական նորոգություններ կատարելով:

Ինչքը՝ Սիմեոն կաթողիկոսը, Մկրտիչ եպիսկոպոսի ծախքով, պարիսպ քաշել տվեց Ս. Հոփիսիմեի վանքի շուրջը. պարիսպն ունի կամարակապ դարպաս, որի ճակատին արձանագրված է ի ՌՄՌ (1776 թ.):

Կալկաթա քաղաքում բնակություն հաս-

տատած նոր ջուղայեցի Խաչիկ իշխանի ծախքով 1790 թվականին Ղուկաս Կաթողիկոսը Ս. Հոփիսիմեի վանքի վոքքիկ գալթի վրա սրբատաշ քարից շրս սյուների վրա հենվող կաթուղիկե կառուցել տվեց, որի մասին վկայում է նույն թվականին զանդակատան մեջ գրված արձանագրությունը:

Տաճարի շենքը դրսի կողմից քառակուսի

Ս. Հոփիսիմեի տաճարն ունի մի սեղան և չորս խորան՝ առաջինը ու հետեւի դասերի կողմերի անկյուններում:

Տաճարում թաղված են շինարար կաթողիկոսները: Բեմի առաջ գտնվում է Կոմիտաս կաթողիկոսի տապանը սալահատակին հավասար Փիլիպոս կաթողիկոսի դամբարանը գտնվում է աջակողմյան դասում և ունի



Ս. Հոփիսիմեի վանքը

է, ներսից բոլորաձև, որմասյուները հյուսիսային ու հարավային ողմերից առաջանալով բոլորաձև են կառուցված. սրանք իրենց վրա կրում են լայնանիստ կաթողիկեն, որը ներսի կողմից պատշկամբ ունի. այս պատշկամբի վրա դռներ կան, որոնք տանում են դեպի տանիքի վրա բրդածեցինված սենյակները: Կաթուղիկեն լուսավորվում է չորս լուսամուտներով:

բարձր առավանաբար: Արևմտյան դռան առաջ դրսի կողմից՝ զանգակատան տակը Կառավիտ և Աստվածատուր կաթողիկոսների շիրիմներն են գտնվում: Տաճարից դուրս գտնվում են մի քանի այլ շիրիմներ, որոնց թվում նաև Հայտնի պատկերան ու գրականագիտական լեռան Ստեփաննոս վարդապետի շիրիմը:

7. Ս. ԳԱՅԱՆԵՒԽ ՎԿԱՅԱՐԱՆ

Ս. Գայանեի տնվան Սահակ Պարթեի կառուցած փոքր ու մթին մասուող եզր կաթողիկոսը 630 թվականին քակելով, կոփիածոք բարից, վայելու կաթուղիկենով, ընդարձակ ու հոյակապ մի տաճար կառուցեց:

Շնորհ ասաւ Հայրապետն Եզր զվկայարան սրբոյն Գայիանեայ՝ զոր երբեմն խրթին և մթին էր շինեալ, քակեալ զայն, և

ընդարձակագոյն և պայծառագոյն զնա շինեաց կողմածոյ քարամբ և կրով ձուկելով, և արտաքուստ յարգարէր կայանս բնակության բահանայական դասուց ի պաշտօն աստուածային խորանին» (Յովեաննէս Զ կաթողիկոս):


1652 թվականին Փիլիպոս կաթողիկոսը

գրեթե ամբողջապես վերանորոգեց Ս. Գայլիանեի վանքը, որի տանիքը քայլայված էր, կաթուղիկեն ծոված միայն շորս որմերն ու շորս սյուներն էին կանգոն մնացել, այն էլ ծակոտեն ու խրամատյալ վիճակում:

«Բայց սրբուն Գայլիանեայ կոսի տաճարն առաւել ամերեալ էր, զի տանիքն բովանդակ իշեալ էր, միայն շուրջանակի որմունքն և շորեք սիմքն կալին կանգոն, պլուխն ի բաց և յատակն որմուն աստ և անդ ծակոտեալ

առնելով կրկին ետ տեղավորում է իր տեղում:

30 տարի անց Եղիազար կաթողիկոսը Մայր Աթոռում կատարած իր շինարարության զուգընթաց Ս. Գայլիանեի վանքի տաճարի արեմտյան պատին կից շինել է տալիս մի վայելուշ գալիթ. տաճարի ներսում էլ, նրա հյութաային ու հարավային կողմերում, շինել է տալիս երկու փոքրիկ սեղաններ՝ սրբոց Պետրոսի ու Պողոսի անվամբ: Այնու-



Ս. Գայլիանեի վանքը

և խրամատյալ, որոց արար նորոգման սկիզբն կաթուղիկոսն Տէր Փիլիպպոս մեծահղձ կարօտիւ և շանիւ և զրազում գանձածախելով, նորոգեաց գեղեցկաշէն ի հիմանց մինչև զգադաթ գմբթին, յորոյ վերայ կառուցին զնշան տէրունական խաչին» (Առաքել պատմագիր):

Այս վերանորոգության գործը վարել է մի ուժն Հովհաննես արեղա, որը կասկածել է, թե արդյո՞ք սուրբ կույսի նշխարները գտնվում են իր տեղում, քանի որ մատուռը բոլորովին ավերված է եղել: Իր կասկածները փարատելու համար նա միայնակ գտնված ժամանակ բաց է անում սուրբ կույսի գերեզմանը և նրա միջի նշխարներից մը մասունք:

Հետեւ Եղիազար կաթողիկոսը շինել է տալիս փոքրիկ զանգակատներ ու մի նոր շենք էլ կառուցում միաբանության համար. ապա պարսպապատել է տալիս վանքը ու կարգում միաբանություն:

Ս. Գայլիանեի տաճարը մի երկար քառանկյունի է ներկայացնում, շորս սյուների վրա հենվող բարձր ու հոյակապ կաթուղիկեռով: Ունի երեք գոտ ու մեծ լուսամուտներ: Արևմտյան դռան առաջ գտնվում են հանգույցալ կաթողիկոսների դամբարանները՝ մարմարյա տապանաքարերով: Դրանց թրվում, ամենավերջում, այստեղ թաղվել է նորեն Ս. կաթողիկոս Մուրագրիկյանը:

Ս. Գայլիանեի տաճարը վերջին անգամ

նորոգվել է Ս. Էջմիածնի միաբան Վահան վարդապետ Բաստամյանի վանահայրության օրոք: Վահան վարդապետը 1872 թվին նորոգեց տաճարի խախտված որմերը և քացեց ու մեծացրեց Հյուախային դուռն ու լուսամուտները: Միաժամանակ նորոգեց վանահոր ու ուկտավորների սենյակները և ավելացրեց այդ սենյակների թիվը: Տպագրական մեքենա բերել տվեց ու սկսեց հրատարակել «Դպրոց» ամսագիրը: Սենյակ-

ներից մեկում տարրական դպրոց բաց արեց՝ երեխաներին հայերեն և ռուսերեն լեզուներով ուսում տալու համար: Եվ այս բոլորը նա անում էր իրեն տրվող սննդադրամով ու ժողովրդի կողմից արվող նվիրատվությամբ:

Ս. Գայիանեի վանքին կից գտնվում է Ս. Էջմիածնի միաբանության գերեզմանոցը, ուր, ի շարս հանգուցյալ եպիսկոպոսների ու վարդապետների, թաղված է նաև Առաքել վարդապետ Գայլիթեցի պատմագիրը:

8. Ս. ՇՈՂԱԿԱՆԹԻ ՎԿԱՅԱՐԱՆ

Ս. Գրիգոր Լուսավորչի ու Տրդատի կառուցած վկայարաններից հրորդը հանդիսանում

է «ի տեղուց հնձանի», մենավոր ու հիվանդ սուրբ կույսի նահատակության տեղում



Ս. Շողակարի վանելը

կանգնեցրած մատուքը:

Ավելի ուշ այդ մատուքի տեղում կառուցվեց մի հոյակապ ու կոփածող քարերից շինված տաճար, որն ունի հետևյալ արձանագրությունը:

«Եինեցա հնագանեաց մատուքս» ի թուին ԶՃ և Գ (603 թ.):

Տաճարի այժմյան գեղեցիկ փոքրիկ շենքը, շինված կոփածող քարերից, առանց սյուների ու վայելով կաթողիկեով ու չորս լուսամուտներով, կառուցվել է շողոթեցի Աղամալ իշխանի ծախքերով 1694 թվականին, նահապես կաթողիկոսի օրոք։ Տաճարն ունի երկու դուռ՝ արևմտյան և հարավային կողմերում։ Մենավոր ու անհայտ կույսի տապանաքարը գտնվում է տաճարի հարավային խորանում։

Շենքի արևմտյան դռան ճակատին արձանագրված է նրա կառուցման թվականը՝ 1694 թ.։

Կանքն արևմտյան ճակատի լայնությամբ ունի փոքրիկ զանգակատնով մի գալիթ. ուր թաղված են նահապետ և Արքահամ կրթացի կաթողիկոսները։

Կանքը պատսպարված է չորս բուրգերով, որոնցից հյուախ-արևմտյան բուրգի վրա կա մի փոքրիկ խաչքար։

Հիշատակվում է, որ երբ Արարատյան երկիրը գտնվում էր պարսից տիրապետության ներքո, Հուշաննեց Հակոբ եպիսկոպոսը, իր վանահայրության օրոք, վանքի բակում իր ձեռքով պտղատու ծառերի մի մեծ այգի տնկեց։

9. ՎԵՐՋԱԲԱՆ

Ս. Գրիգոր Լուսավորիչ 66 օր քարոզություն անելով՝ հորդորեց թագավորին, իշխաններին ու ժողովրդին թողնել կռապաշտությունը և քրիստոնեական հավատով լուսավորել։

Տրդատ թագավորը ծնկաշռք ունկնդրում էր Գրիգոր Լուսավորչի հորդորական խոսքերը և հոգով զգում քրիստոնեական կրոնի ճշմարտությունը, այն կրոնի, որի համար սրբակաց կույսերը հանձն տռան նահատակվել ու իրենց կյանքը զոհել սահրոյն Քրիստոսի։

Տրդատը ինքն անձամբ Ս. Գրիգորի ու ժողովրդի հետ միասին հավաքեց նահատակված կույսերի նշխարները և ամփոփեց նըրանց տապաններում ու վկայարաններ կանգնել տվեց։

Հավատալով Գրիգորի քարոզած Քրիստոսի ավետարանին՝ Տրդատը, նախարարներն ու ժողովուրդը ցանկություն հայտնեցին

Հրաժարվել հեթանոսությունից, մկրտվել ու քրիստոնեական կրոնն ընդունել։

Անմիջապես սկսվեցին հեթանոսական աստվածների մեջյանների կործանումն ու հալածանքը քրմերի ղեմ։ Հայ ժողովուրդը մկրտություն ընդունելով քրիստոնյա դարձավ։

Հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցող այս խոշոր շրջադարձը կատարվեց 301—303 թվականին։

Երախտապարտ Հայ եկեղեցին կույսերի հիշատակը հավերժացնելու համար ուխտագություն սահմանեց ղեպի նրանց անվան վկայարանները։

Ամենայն տարի Հոգհեղալստից ութ օր անց, եկեղեցական հանդեսով, երկուշաբթի օրը տոնվում է Ս. Հոփիսիմյանց, իսկ երեքշաբթի օրը՝ Ս. Գոյիանյանց տոնները՝ նրանց անվան վանքերում։

Եկեղեցական արարողության ժամանակ երգվում է Կոմիտաս կաթողիկոսի հորինած սքանչելի շարականը։

«Անձինք նուիրեալի սիրոյն Քրիստոսի,
Երենաւոր հահատակի և կուսանք իմաստուն
Ի պարծան ծեր բարձրացեալ տօնի՝
Մայր Սիրովն դստերօն իւրովի։»

Շարականը վերջանում է հետևյալ խոսքերով։

«Իիւծնալի մաշեցան յուսացեալի ի մեծութիւն,
Եվ կանայի վեհազինք գերազանցեալի յաղթեցին,
Բուրզանք ոսկեղէն երով նոգոյն վառեցան,
Զահազեստեալի ի Քրիստոս և դասեալի ընդ հեղակակի»։

